

ՄԻՔԱՅԵԼ ՔՈՔԱՆՅԱՆ
(ծննդյան 60 ամյակի առթիվ)

Գիտության գործիչների շարքում, որոնք իրենց տաղանդով և աշխատանքով նշանակալից ալիսնդ են ներդրել հասարակագիտության, մասնավորապես տնտեսագիտության զարգացման մեջ, նպաստել են երկրում նրա առաջատար դիրքեր գրավելուն, աչքի ընկնող տեղ է գրավում



ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Խ. Քոքանյանը: Նա խոշոր դիտնական-տնտեսագետ է քաղաքատնտեսության, ժողովրդական տնտեսության պլանավորման և կառավարման կազմակերպման բնագավառում: Հանրագիտությունում նրան են պատկանում սոցիալիստական շինարարության մեջ տնտեսագիտական կառուցողականների ուսումնասիրության մեթոդոլոգիայի մշակման, այդ կառուցողականների բնույթի և օգտագործման առանձնահատկությունների ու տնտեսական օրենքների պահանջների իմացության, ինչպես նաև տնտեսական մեխանիզմի ասպեկտների կատարելագործման նոր հարցադրումները:

Գիտական հետազոտություններն օրգանապես միաճյուսվում են նրա մանկավարժական աշխատանքի, գիտակազմակերպչական և հասարակական-քաղաքական գործունեության հետ, որոնք կազմում են նրա ստեղծագործական կենսագրության անկապտելի մասը:

Միևյակի Խաչիկի Քոքանյանը ծնվել է 1927 թ., Հայկական ՍՍՀ Քալինի շրջանի Իրինդ գյուղում, հոգաբարձի ընտանիքում: Մանկական տարիները

րից շփումը հողի աշխատավորների հետ, ծանր լինակի մայական պայմանները, որոնցում հասակ է առել ապագա ակադեմիկոսը, ոչ երկրորդական դեր են խաղացել գիտնականի աշխարհայացքի ձևավորման գործում, որն իբրև իր ստեղծագործական հետաքրքրությունների շրջանակ է ընտրել բնության, աշխատանքի գործիքների, նյութական և հոգևոր բարիքների արտադրության պրոցեսում մարդկային փոխհարաբերությունների պրոբլեմի հետազոտումն ու լուսաբանումը:

Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում ուսումնառությունն ավարտելուց և «Հայէներգոյի» համակարգում իբրև ֆինանսիստ աշխատելուց հետո Մ. Խ. Քոքանյանն ընդունվել է ասպիրանտուրա և գործուղվել է երկրի տնտեսագիտական մեթի ասպրանտուրա կենտրոն՝ ՍՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտ: Այնտեղ նա գիտական մկրտություն է ստացել ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյանի ղեկավարության ներքո: Հետագայում «ուսուցիչ-աշակերտ» համակարգը փոխակերպվեց նորի՝ «բնատիտուտի դիրեկտոր-գիտական գծով դիրեկտորի տեղակալ», վերաներվել նոր ձևի՝ ստեղծագործական համագործակցության և անկեղծ բարեկամական փոխհարաբերությունների: Երկու ակադեմիկոս-տնտեսագետների միջև մեծ, գրեթե շոտ տասնամյա բարեկամությունն այսօր ևս շարունակվում է:

Ասպիրանտուրան ավարտելուց հետո աշխատել է իբրև ՀԿԿ Կենտկոմին առևտրի կուսակցական դպրոցի, ապա ՀԿԿ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի դասախոս, «Հայաստանի ժողովրդական տնտեսություն» ամսագրի գլխավոր խմբագիր: Մ. Խ. Քոքանյանը 1964 թ. սկսած իր կյանքը կապել է ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի հետ: Մյուստեղ էլ դրսևորվեցին հետազոտողի նրա առաջնորդ և մշակվող պրոբլեմների լուծման նկատմամբ առաջ-

հային մտանցման անուանակի ձիւրքը: Նա իր բնությամբ, խառնվածքով սիրում է ձեռնամուխ լինել «խոսքան» կամ քիչ մշակված տնտեսական ու սոցիալական պրոբլեմների հետազոտությանը և կատարելով փոխադրմանավորված պրոբլեմների նամակների խոր և բազմակողմանի վերլուծություն, հանգում է նոր, երբեմն էլ սկզբունքորեն նոր եզրակացությունների և հանձնարարականների: Ուշագրով է նաև այն, որ դրանք ոչ միայն աչքի են ընկնում իրենց ինֆնատիվությամբ, այլև հաճախ ծավալակալի բավականին առաջ են անցնում երկրի առաջատար մասնագետների նմանօրինակ արդյունքներից: Այսպես, դեռ 1960-ական թվականներին Մ. Խ. Քոբանյանը մշակեց և նրատարակեց նոր հանձնարարականներ, որոնց արդիականությունը տնտեսագիտության մեջ և պրակտիկայում սկսեց նաեւաչել 1980-ական թվականներին: Գիտնականը բացահայտեց և հիմնավորեց անհատական աշխատանքային գործունեության անդր ու դերը օտարալիզմի տնտեսական հարաբերությունների համակարգում, սոցիալիզմի օրոք տնտեսական հակասությունների դրսևորման բնույթն ու ձևերը, երկրում տնտեսության անի տնայնի իջեցման պատճառները և այլն:

Հայտնի է, որ մեր հանրագիտության սոցիալ-տնտեսական զարգացման պլանավորման տեխնոլոգիայում ծրագրային-նպատակային մեթոդները սկսեցին կիրառվել 11-րդ հնգամյակից: Գիտատեխնիկական առաջընթացի և Հայկական ՍՍՀ-ում նրա սոցիալ-տնտեսական հետևանքների առաջին կոմպլեքսային ծրագիրը մշակվել է 1982 թ.: Բայց այդ հարցում ևս հոբելյարը գիտության և պրակտիկայի հետ ոտ-ոտի չի փայլել. նա դեռ 1978 թ. հրատարակել է հոդված և գրախոսել «Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտեսական զարգացման կոմպլեքսային ծրագրի մասին»: Դրանցում նա հիմնավորել է հանրագիտության ռեսուրսային պոտենցիալի օգտագործման անհրաժեշտությունը և առաջարկել է նպատակային ծրագրերի իրացման կազմակերպչական ուղիներ:

Ձի կարելի չընդգծել Մ. Խ. Քոբանյան-հետազոտողի ևս մեկ տարբերակիչ և դրա հետ մեկտեղ դրական առանձնահատկությունը: Դա խոր համոզվածությունն է, վերականգնությունը իր գիտական հայեցակետի նշտությունը պաշտպանելու մեջ:

Մ. Խ. Քոբանյանի գիտահետազոտական գործունեության մեջ մտածողության անկախությունն ու սուաշագնաց բնույթն առավել վառ դրսևորվեցին «Գիտատեխնիկական հեղափոխությունը և տնտեսագիտական տեսությունը» կապիտալ աշխատության ձեռագիրը պատրաստելու ընթացքում: Այստեղ նա ևս առաջարկում էր գործով ապացուցեց, որ տեսության պատմականորեն նկատված դրույթների վերանայումը և համընդհանուր հանաչվածի էական հարստացման համար տեսական և մեթոդաբանական հիմքերի մշակումը կամ հասարակական զարգացման նոր փուլին համապատասխան նոր տեսության կառուցումը ոչ միայն այսպես կոչված «կենտրոնի» նասարակագիտության առանձնաշնորհն է: Հավատարիմ մնալով իր «գիտական աշխատողն իր հետազոտություններում պետք է փնտրի նշտությունը, պետք է ղեկավարվի ոչ թե այն բանով, թե ինչն է ընդունված, այլ ուղեցույց ընտրի այն, ինչը հիշտ է» հավատամքը, ակադեմիկոս Մ. Խ. Քոբանյանը «ապստամբեց» ընդդեմ այն բանի, որ հասարակական գիտությունները պետք է, իբրև կանոն, սահմանափակվեն սոցիալ-տնտեսական ռեսուրսայինների պատկերմամբ և բացատրությամբ: Դեռ 1970-ական թվականների սկզբին նա ձեռնամուխ եղավ այժմյան գիտատեխնիկական հեղափոխության ծավալման պատմական ակունքների, նրա տեղի, դերի ու մարդկային հասարակության զարգացման մեջ սոցիալական հետևանքների հետազոտությանը և հանգեց տնտեսական պրոցեսների, կատեգորիաների ու օբյեկտների Վասին նախկինում մի շարք պատկերացումների վերանայման անհրաժեշտությանը:

Հայտնի է, որ ծավալակալի մի շարք հանգամանքների հետևանքով հասարակական կյանքի մասին ավտորիտար զննատականներն ու դատողությունները դարձել էին անառարկելի նշտություններ, որոնք հեքակա էին միայն մեկնաբանության: Ինչպես նշվեց ՍՄԿԿ Կենտկոմի հունվարյան (1987) պլենումում, սոցիալիզմի մասին տեսական պատկերացումները մնում էին 30—40-ական թվականների մակարդակին, ֆաղափանություն և պրակտիկ գործունեության մշակման ծավալակալ գերիշխում էին պահպանողական տրամադրությունները, ինքնցիան, ձգտումը խույս տալու այն ամենից, ինչը շեղում էր տեղավորվում սովորական սխեմաներում:

Հասարակական-տնտեսական հարաբերությունների մանրագրին ուսումնասիրության հիման վրա Մ. Խ. Քոբանյանը հանգեց հետևյալ սկզբունքորեն նոր եզրակացությանը. ֆանի որ ֆաղափանությունը դրանք հետազոտում է դիալեկտիկական զարգացման և միասնության մեջ, սպա այն պետք է միասնական լինի բոլոր հասարակական ֆորմացիաների համար:

Մ. Խ. Քոբանյանը, ինչպես վայել է գիտնական-կոմունիստին, համարձակ փորձ կատարեց բացահայտելու տնտեսական կատեգորիաների գործողության մեխանիզմը գիտատեխնիկա-

կան հեղսփոխության ծավալման շրջանում, որը խիստ անհրաժեշտ է հասարակական արտադրության գիտականորեն հիմնավորված կառավարման համար: Նա հիմնավորում է, որ հասարակական արտադրությունը պետք է դիտարկվի լայն իմաստով՝ իբրև նյութական և հոգևոր բարիքների արտադրություն: Ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր բարիքների արտադրության համար ծախսված աշխատանքն անհրաժեշտ է համարել իբրև հասարակայնորեն անհրաժեշտ, արտադրողական աշխատանք: Որոշ տնտեսական կառուցողներ (արտադրություն, բաշխում, ֆոխանակություն, հասարակական սպառում, հասարակական շահ, ապրանք, արժեք, փող և այլն) հանգիստանում են մարգկային հասարակության առաջընթացի ցուցանիշները: Այդ իսկ պատճառով նրա հետագա զարգացման ընթացքում դրանց զրկուման ձևերը կարող են փոխվել, բայց չմահանալ:

Որքան լայն են նրա գիտական հետազոտությունները, այնքան էլ բազմակողմանի է նրա գիտակազմակերպչական և հասարակական գործունեությունը: Նախքան ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտը գլխավորելը նա գրեթե 4 տարի վարել է ՀԿԿ Կենտկոմի տնտեսագիտության բաժինը, մի շարք գիտական խորհուրդների, «Հայաստանի ժողովրդական տնտեսության» ամսագրի խմբագրական կոլեկտիվի անդամ է, ՍՍՀՄ ԳԱ «Սոցիալիզմի զարգացման տնտեսական օրինաչափությունները և երկու սիստեմների մրցությունը» կոմպլեքսային պրոբլեմի գիտական խորհրդի հայկական մասնաճյուղի, կանխատեսման գծով հանրապետական գիտական խորհրդի «Գիտության ռեսուրսներ» պրոբլեմային հանձնաժողովի նախագահը և այլն:

Մ. խ. Քոթանյանը ՀԿԿ Կենտկոմի անդամ է, ՀՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ, նրա ոլլանային-բյուրոյային հանձնաժողովի նախագահ: Ընթերցողի մոտ Մ. խ. Քոթանյանի մասին պատկերացումը լիակատար չի լինի, եթե չասենք աշխատակիցների և աշակերտների հետ նրա փոխհարաբերությունների մասին. դա բարյացակամություն է և ամեն տեսակի արակցություն, մտանդություն շրջապատողների հակասազդով:

Հորեկարն այժմ լի է եռանդով և գտնվում է ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում, ինչն անհրաժեշտ և բավարար նախապայման է տնտեսագիտության հարստացման համար՝ ի փառս հայրենական գիտության:

ԱՐԱ ՄԽԻՔԱՐՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր